չիրին մինչև ցայժմ. ևս ի ժամանակիս յայսմ գնացեալ նա բնակեցաւ ի Ֆռանկստան։

Դշի օրս (4 Ցուն) եազու եղեւ տօնանմային։

Եւ Եշիս (5 Ցուն) զՖլանտրան կախեցին. և էին փոյթ ի գնալ։

Եւ օրս խորհուրդ արարեալ քաղաքացւոցս եւ ուղարկեցին թուղթ առ նուիրակն Էջմիածնայ, որ եկեալ էր ի Պուրսա վասն ի տեղս գալու եւ նուիրակելոյ, եւ տեղացւոցս զայս թուղթ ուղարկեալ առ նա, որ ունէր օրինակ զայս. Ի Կոստանդնուպօլսոյ Զ եկեղեցոյ իշխանաց, աթոռակալից, եկեղեցականաց և այլ հասարակ քահանայից, ժողովրդեան մեծամեծաց եւ փոքունց եւ այլ եկք եւ բնիկք Հոռմցոցս ամենայնի. ուշ լիցի քեզ Արեւելցի Մարտիրոս եւ Մովսէս վարդապետդ եւ նուիրակդ, պարոնտէրդ եւ փիլիսոփայդ, որ լու եղև փափաքելի և սխրալի գալուստ քո առ անարդ և մոլի, յիմար և տմարդի Տունս Ցունաց։ Ինայելով ի քեզ գրեմք, վասն Աստուծոյ ի բաց լե՛ր. խունկդ եւ մոմդ քեզ, եւ զայլն ի կարգին։ Զի եթէ ի Թոխաթ եւ ի Կեսարիայ եւ յԱնկուրիայ հոգւով սրբոց և բանիւ Տեառն շրջէիր, լի արարիր որ մինչև յըռընկունս։ Ապա որ նաւթ և խոիւ, ծծումբ և վուշ ծոցեալ ես, ո՞ւր ընթանաս, առ ո՞վ ճեմիս, զորո՞ց թերին լնուս, կամ զո՞ր պատուելոցս զհակակայն ներգործես. զո՞յ կամ գտանի՞ն յեկեղեցիս անկիւնավէմ, կամ ցըցապինդ սեղան, կամ սրբատաշ կամար, կամ պընդախարիսխ սիւն, կամ պռամած հիմ մինչև ի սեմն և ի բարաւորն[1]) որ ի ձէնջ ոչ խախտեցան, և շարժին եւ խըխայթին եւ խորովասիրտ մորմոքին. զի թէ յաչս մեր եւ Քրիստոսիս մեր ժպրհեցէք, յանդգնեցայք, խիզախեցէք, անամօթացայք՝ հնարելով, ոխա-

1) բարավարն.